ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«11» ապրիլի 2023 թ. N 69-Ա/1

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման հավելվածի 34-րդ կետի պահանջով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 12-ի N 134-Ա/1 հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի 2023 թվականի մարտի 31-ին ընդունած N16 որոշումը:

4/11/2023

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 16

Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով նախատեսվելիք միջոցների հաշվին իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին դրամաշնորհներ հատկացնելու նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովի

«31» մարտի 2023 թվական

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման 31-րդ կետով և հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի 2023 թվականի մարտի 31-ի N 3 արձանագրությունը.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների ցանկը, որոնց հետ կարող է կնքվել դրամաշնորհի պայմանագիր՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի շրջանակներում հայտ ներկայացրած սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների ցանկը, որոնց հետ չի կարող կնքվել դրամաշնորհի պայմանագիր՝ համաձայն N 2 հավելվածի:

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Տաթևիկ Ստեփանյան
Անդամներ՝	_____	Արթուր Եղիազարյան
	_____	Քրիստինա Հովհաննիսյան
	_____	Անահիտ Հովհաննիսյան
	_____	Արտակ Մկրտչյան
	_____	Հրաչ Մարգարյան
Քարտուղար՝	_____	Լիանա Մկրտչյան

Հավելված N 1
Մրցութային հանձնաժողովի
2023 թ. մարտի 31-ի N 16 որոշման

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների, որոնց հետ կարող է կնքվել դրամաշնորհի պայմանագիր

Չափաբաժին		Առաջին տեղը զբաղեցնող կազմակերպություն	Շահառուների թվաքանակ	Պետական բյուջեից հատկացված գումար
«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների փրամադրում»				
1.	Լոտ 1 - Գեղարքունիք	Վորլդ Վիժն Հայաստան	Ամսական 145 շահառու	15,619,500
2.	Լոտ 2- Սյունիք	Վորլդ Վիժն Հայաստան	Ամսական 150 շահառու	15,874,500

Հավելված N 2
Մրցութային հանձնաժողովի
2023 թ. մարտի 31-ի N 16 որոշման

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի շրջանակներում հայտ ներկայացրած սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների, որոնց հետ չի կարող կնքվել դրամաշնորհի պայմանագիր

Չափաբաժին		Կազմակերպություն
«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում»		
1	Լոտ 2- Սյունիք	*Գործընկերություն և ուսուցում քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող ՀԿ*